Տեղեկանք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ» վերաբերյալ փոփոխությունների մասին

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 423. Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության ծախսերի փոխհատուցումը

1. Օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում վերադարձման ներկայացված և հարկային մարմնի կողմից հետ ընդունված՝ վնասված կամ խոտանված կամ դրոշմավորման ոչ ենթակա ապրանքի վրա փակցված և ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցված ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների համար հարկ վճարողից, որպես փոխհատուցում, գանձվում են այդ դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը:

2. Օրենսգրքի 389-րդ և 390-րդ հոդվածներում նշված ապրանքները Կառավարության սահմանած կարգով դուրս գրվելու դեպքում այդ ապրանքների վրա փակցված ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների համար հարկ վճարողից, որպես փոխհատուցում, գանձվում են այդ դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի կիրառության իմաստով, հնարավոր չէ որոշել դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը, այդ ծախսերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով ծախսերի հաշվարկման պահին գործող՝ Կառավարության որոշմամբ դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների համար սահմանված գները:

4. Օրենսգրքին համապատասխան դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվող ապրանքների, ինչպես նաև անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսված ապրանքների դրոշմավորման դեպքում դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողից՝ որպես փոխհատուցում, գանձվում են այդ դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների տպագրության համար հարկային մարմնի կատարած ծախսերը, եթե այդ ապրանքների մաքսային հայտարարագրում (Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանելու դեպքում՝ տարանցման մաքսային հայտարարագրում) նշված են դրոշմանիշերի (դրոշմապիտակների) թիվը, սերիաները, հերթական համարները (այդ թվում՝ միջակայքերով) և դրանց ստացման հաշիվ-վավերագրի համարն ու ամսաթիվը:

(423-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, փոփ., լրաց. 21.06.18 ՀՕ-338-Ն, 16.12.21 ՀՕ-408-Ն)

(21.06.18 ՀՕ-338-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 423.1. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով և (կամ) հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքների շրջանառությունը

1. Ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով և (կամ) հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ

պահելը, տեղափոխելը, առաբելը, ձեռք բերելը կամ դրանք օգտագործելը կամ իրացնելը, եթե դրանց քանակը չի գերազանցում 10 հատը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով:

2. Նույն խախտումը, եթե այդ ապրանքների քանակը կազմում է 11-50 հատ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

3. Նույն խախտումը, եթե այդ ապրանքների քանակը կազմում է 51-100 հատ՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկի չափով:

4. Նույն խախտումը, եթե այդ ապրանքների քանակը կազմում է 101 հատ և ավելի՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարերկուհարյուրապատիկի չափով: